ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության մաքսային վարչության և Թուրքմենստանի պետական մաքսատան միջև՝ սահմաններով ապօրինի տեղափոխվող մշակութային արժեքների պահման և վերադարձման հարցերով համագործակցության և փոխօգնության մասին

Հայաստանի Հանրապետության մաքսային վարչությունը և Թուրքմենստանի պետական մաքսատունը, այսուհետ՝ Կողմեր,

նկատի ունենալով, որ մշակութային արժեքները հանդիսանում են ժողովուրդների քաղաքակրթության և մշակույթի տարրերից մեկը,

նշելով, որ մշակութային արժեքների ապօրինի արտահանումը, տարանցումը և ներմուծումը վնաս է հասցնում ժողովուրդների մշակութային սեփականությանը, որի պահպանությանը պարտավոր են աջակցել պետությունների մաքսային և այլ իրավասու մարմինները,

ձգտելով ուժեղացնել սահմաններով մշակութային արժեքների ապօրինի տեղափոխման դեմ պայքարը և ամրապնդել մաքսային համագործակցությունը այդ բնագավառում,

պայմանավորվեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Հայաստանի Հանրապետության և Թուրքմենստանի օրենսդրությամբ նախատեսված լինելու դեպքում մշակութային արժեքները արտահանման թույլտվություններով կարող են դուրս բերվել այդ պետություններից:

Հոդված 2

Արտահանման թույլտվությունները տալիս են արտահանող պետության՝ դրա համար լիազորված մարմինները և ուղեկցում են մշակութային արժեքները:

Կողմերի մաքսային ծառայությունները փոխանակում են անհրաժեշտ քանակությամբ թույլտվությունների ձևաթղթերի նմուշները և այն կնիքների դրոշմները, որոնցով դրանք կնքվում են:

Հոդված 3

Մշակութային արժեքներ տեղափոխող ֆիզիկական անձինք և իրավաբանական անձանց ներկայացուցիչները պարտավոր են հայտարարել իրենց մոտ այդպիսի արժեքների առկայության մասին և Կողմերի մաքսային ծառայությունների ստուգմանը ներկայացնել դրանք արտահանման թույլտվության հետ միասին:

Մշակութային արժեքների արտահանման թույլտվության բացակայության դեպքում դրանք պահվում են, և այդ մասին անհապաղ

ծանուցվում է Կողմերից մեկին, որի տարածքից այդ արժեքները արտահանվել են: Նման դեպքերում սահմանվում է մշակութային արժեքների արտահանման թույլտվություն ներկայացնելու համար ժամկետ, որը չի կարող գերազանցել երկու ամիսը:

Հոդված 4

Կողմերը կձեռնարկեն միջոցներ, որպեսզի ապահովեն.

- արտահանման թույլտվությամբ չուղեկցվող՝ հայտնաբերված մշակութային արժեքի վերադարձը արտահանման պետություն,
- մշակութային արժեքների ապօրինի տեղափոխող անձանց պատասխանատվության ենթարկելու դեպքում այդ արժեքների վերադարձը արտահանման պետություն կատարվում է նշված անձանց պատասխանատվության ենթարկելու մասին որոշման օրինական ուժի մեջ մտնելուց հետո,
- վերադարձվող մշակութային արժեքների հանձնման և ընդունման համար իրենց լիազորված ներկայացուցիչների նշանակումը,
- այն մշակութային արժեքների մասին տեղեկության փոխադարձ փոխանակումը, որոնք, Կողմերի օրենսդրությանը համապատասխան, կարող են արտահանվել արտահանման թույլտվություններով, ինչպես նաև՝ որոնք ենթակա չեն արտահանման:

Հոդված 5

Կողմերի մաքսային ծառայությունների կողմից պահված մշակութային արժեքները վերադարձվում են անմիջականորեն, սույն Համաձայնագրի 4-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան, դրա համար լիազորված ներկայացուցիչներին, և մշակութային արժեքների վերադարձման հետ կապված բոլոր պահանջները քննարկվում են արտահանման պետության կողմից:

Հոդված 6

1. Կողմերը միմյանց անհատույց փոխադարձ օգնություն են ցուցաբերում սույն Համաձայնագրի կիրառման հարցում, բացառությամբ մասնագետների այցելությունների (եթե Կողմերից մեկը անհրաժեշտ համարի), մշակութային արժեքների պահման ու փոխադրման, ներմուծման կամ տարանցման պետությունից արտահանման պետություն վերադարձման հետ կապված ծախսերի վճարումը:

Նշված ծախսերը կրում են արտահանման պետության մաքսային ծառայությունները:

2. Սույն Համաձայնագրին համապատասխան վերադարձվող մշակութային արժեքները չեն հարկվում որևէ մաքսային կամ այլ գանձումներով:

Հոդված 7

Կողմերը պարբերաբար կխորհրդակցեն համագործակցության հարցերով և սույն Համաձայնագրի կատարման շրջանակներում կիրականացնեն փորձի փոխանակում:

Հոդված 8

Սույն Համաձայնագրի դրույթները չեն շոշափում Կողմերի՝ այլ համաձայնագրերին համապատասխան ստանձնած պարտավորությունները:

Հոդված 9

Սույն Համաձայնագրի մեկնաբանման և կատարման հետ կապված բոլոր վիճելի հարցերը Կողմերի միջև լուծվում են բանակցությունների միջոցով:

Համաձայնագիրը կարող է փոփոխվել և լրացվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

Կողմերի միջև նամակագրությունը կիրականացվի ռուսերեն:

Հոդված 10

Սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում Կողմերը փոխանակում են իրենց պետություններում մշակութային արժեքների տեղափոխման կարգը սահմանող օրենքների և կանոնների տեքստերը և հետագայում հնարավորինս կարճ ժամկետում կհաղորդեն այդ օրենքների և կանոնների փոփոխությունների մասին:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և կգործի մինչև 1993 թվականի դեկտեմբերի 31-ը, որից հետո այն ինքնաբերաբար կերկարաձգվի մեկ տարի ժամկետով, եթե ժամկետի ավարտից վեց ամիս առաջ Կողմերից ոչ մեկը գրավոր չհայտարարի Համաձայնագրի գործողությունը դադարեցնելու իր մտադրության մասին:

Կատարված է Աշգաբատ քաղաքում 1993 թվականի հունիսի 30-ին, երկու օրինակով՝ հայերեն, թուրքմեներեն և ռուսերեն, ընդ որում բոլոր տեքստերը հավասարազոր են:

Կողմերից յուրաքանչյուրը երաշխավորում է բնօրինակին համապատասխան հայերեն և թուրքմեներեն թարգմանությունները:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 1993 թվականի հունիսի 30-ից: